

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար- գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՎԱՐԴԱՆ ՊՈԳՈՍՅԱՆ

Քաղաքագիտության մագիստրոս,
ԳՄՀԸ իրավական ծրագրի ղեկավար Հայաստանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Հողվածը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005 թվականի փոփոխություններին՝ Հանրապետության Նախագահի կարգավիճակին, գործառույթներին և լիազորություններին վերաբերող դրույթների վերլուծություն է, որի արդյունքում ցույց են տրվում քննարկվող հարցերին վերաբերող այն խնդիրները, որոնք այդ փոփոխությունների արդյունքում իրենց լուծումը չստացան:

Հիմնաբառեր – Նախագահի կարգավիճակ, Նախագահի գործառույթներ, Նախագահի լիազորություններ, սահմանադրական փոփոխություններ, իշխանությունների հավասարակշռում, պառլամենտ, կառավարություն:

Կառավարման ցանկացած համակարգի գլխավոր խնդիրը գործադիր և օրենսդիր իշխանությունների հավասարակշռումն է, պետության գլխի, պառլամենտի և կառավարության միջև ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատումը:

Իշխանությունների հավասարակշռումը որոշիչ է այնպիսի համակարգի կառուցման համար, որում և՛ գործադիր, և՛ օրենսդիր մարմինները բավականաչափ անկախ են և հաշվետու, պատրաստ փոխհամաձայնեցման պայմաններում որոշումներ կայացնելու և ունեն միմյանց նկատմամբ փոխադարձ գործուն վերահսկողական լիազորություններ: Անկախ այն հանգամանքից, թե այդ հավասարակշռությունը որ մարմին՝ պետության գլխի, պառլամենտի, թե անգամ դատական իշխանության մարմինների օգտին է խախտվում, թե մտարը այս մարմիններից որի կողմն է թեքվում, խախտվում է ողջ պետական համակարգի արդյունավետ աշխատանքը, ինչը հղի է բացասական բազմազան հետևանքներով՝ ժողովրդավարական արժեքների նահանջով, արդյունավետության նվազմամբ, ճգնաժամերով և այլն:

Ժողովրդավարական խոր արմատներ չունեցող, ժամանակի ընթացքում սեփական առանձնահատկությունների հաշվառմամբ կառավարման համակարգ չձևակաժ պետությունների համար իշխանության թևերի հավասարակշռման առնչությամբ սահմանադրական ցանկացած բարեփոխ-

ման նպատակը պետք է լինի ստեղծել սահմանադրական այնպիսի մեխանիզմներ, որոնք գործադիր իշխանությանը օրենսդրի վերահսկողության ներքո աշխատելու արդյունավետ հնարավորություն են տալիս և որոնք իշխանության այս երկու թևերի գործունեությունը ենթարկում են սահմանադրական վերահսկողության¹:

Անշուշտ, կառավարման ձևի ընտրությունը քաղաքական է: Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովը բազմիցս արձանագրել է, որ նախագահական, կիսանախագահական և պառլամենտական համակարգերի միջև հիմնարար ընտրությունը տվյալ պետության քաղաքական ընտրության իրավունքն է, և որ բոլոր վերոհիշյալ համակարգերն էլ հնարավոր է ներդաշնակեցնել ժողովրդավարական չափանիշներին: Սակայն բոլոր դեպքերում խորհրդարանը պետք է բավարար վերահսկողական լիազորություններ ունենա գործադիր իշխանության նկատմամբ²:

Անդրադառնալով կառավարման ձևի ընտրությանը՝ պետք է նկատել, որ այն առավելապես քաղաքական որոշում է, որը ոչ թե լավ կամ վատ համակարգի ընտրություն է, այլ կառավարման մի այնպիսի համակարգի, որն «առավել» արդյունավետ կարող է լուծել տվյալ երկրի խնդիրները՝ հաշվի առնելով տվյալ երկրի պատմական, սոցիալական, քաղաքական, տնտեսական առանձնահատկությունները:

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Առաջին հայացքից շատ պարզ թվացող հարցն իրականում բավականին բարդ է: Բազմաթիվ պետություններ անվերջ փնտրությունների մեջ են, թե ինչպիսի լիազորություններով օժտել Նախագահին, խորհրդարանին, կառավարությանը, որպեսզի ողջ պետական համակարգն աշխատի առանց խոչընդոտների, կառավարման համակարգում հնարավոր կոնֆլիկտներն ունենան իրավական լուծումներ:

Հայաստանում կառավարման համակարգի կիսանախագահական մոդելի ընդունումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: 1991 թվականին արդեն գոյություն ուներ ուղղակիորեն ընտրվող Հանրապետության Նախագահի պաշտոն³, և իշխող վարչակազմը Հանրապետության Նախագահի գլխավորությամբ շահագրգռված էր այդ պաշտոնի պահպանմամբ և ուժեղացմամբ: Կառավարող մեծամասնության մտահոգությունը միայն այն էր, թե Հանրապետության Նախագահի ուժեղ դիրքի ամրագրման որ մոդելն է ավելի նախընտրելի: Ընդդիմությունը, որը հիմնականում պառլամենտական կառավարման ձևի կողմնակից էր, պառլամենտում կազմում էր փոքրամասնություն, և նրա ազդեցությունը չէր կարող լինել վճռորոշ: Իշխող մեծամասնության սահմանադրական պատկերացումների անթաքույց արտահայտությունը սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակված 1994 թվականի ապրիլի 20-ի նախագիծն էր⁴, որը Հանրապետության Նախագահի համար ամրագրում էր բացարձակ գերակա դիրք: Հանրապետության Նախագահն առանց պառլամենտի մասնակցության նշանակում և ազատում էր վարչապետին (հոդված 74 կետ 6), կարող էր լուծարել խորհրդարանը (հոդված 74 կետ 5) և ուներ 2/3 վետոյի իրավունք (հոդված 74 կետ 3): Միակ զիջումը վերաբերում էր խորհրդարանին, համաձայն որի՝ վերջինս կարող էր կառավարությանն անվստահություն հայտնել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այլ ոչ թե պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ով, ինչպես դա նախատեսված էր 1991 թվական օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին օրենքի» 8-րդ հոդվածի 6-րդ կետով:

Կառավարող մեծամասնության ընտրությունը կանգ առավ հենց այս մոդելի վրա, քանի որ այն հնարավորություն էր տալիս ճգնաժամային իրավիճակներում հակամարտությունը միշտ լուծել Հանրապետության Նախագահի օգտին՝ պառլամենտի լուծարմամբ: Այս լիազորությունը 1991թ. օգոստոսի 1-ի օրենքով Հանրապետության Նախագահը չունեւ, սակայն Լևոն Տեր-Պետրոսյանը դրա

կարիքը խիստ էր զգում 1992 թվականից: Կիսանախագահական մոդելի օգտին էր խոսում նաև այն, որ Հանրապետության Նախագահն այլևս գործադիր իշխանության ուղղակի ղեկավարը չէր և կարող էր խաղալ վերկուսակցական արբիտրի դեր⁵:

2005թ.՝ Հայաստանում սահմանադրական բարեփոխումների ժամանակ, պրոֆեսոր Օթթո Լուիս-թերիանդը, ով 1993 թվականից որպես խորհրդատու Հայաստանում աշխատել է սահմանադրական բազմաթիվ նախագծերի վրա, անդրադառնալով 2005թ. սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությանը, դրանց մեջ առանձնացնում էր իշխանության երեք թևերի հավասարակշռման հիմնահարցը՝ մասնավորապես նշելով, որ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության մասին 3-5-րդ գլուխները պետք է մեկ անգամ ևս ուշադիր վերանայել և վերամշակել՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հնարավորինս հավասարակշռված, համակարգային պահանջներին համապատասխանող և ներքուստ առանց հակասությունների իշխանության տարաբաշխման տեսանկյունից⁶:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններն առաջին հերթին պետք է վերաբերեին Հանրապետության Նախագահի լիազորություններին, վարչապետի և կառավարության սահմանադրական կարգավիճակին, Ազգային ժողովի վերահսկողական լիազորություններին:

Այս փոփոխությունները ոչ միայն պետք է պայմանավորեին իշխանության երեք ճյուղերի հավասարակշռությունը, այլ նաև ապահովեին իշխանության առանձին ճյուղերի ներսում բավարար գապումների և հակակշիռների մեխանիզմների ներդրումը: Այդ փոփոխությունները երկրի կառավարման համակարգը հնարավորինս պետք է զերծ պահեին նկատվող այնպիսի միտումից, երբ նախագահական իշխանությունը գերիշխում է ինչպես գործադիր իշխանության այլ մարմինների, այնպես էլ օրենսդիր և դատական մարմինների վրա: Առաջ անցնելով՝ նշենք, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, միտված լինելով լուծելու վերը նշված խնդիրները, այնուամենայնիվ գործնականում չկարողացան ապահովել հավասարակշռված կառավարման համակարգ:

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հանրապետության Նախագահի գործառնություններն ու լիազորություններն էական փոփոխությունների չենթարկվեցին: Սահմանադրության 49-րդ հոդվածի նոր 1-ին մասում ուղղակիորեն սահմանվեց, որ Հանրապետության Նախագահը

«պետության գլուխն է»⁷, չնայած այն բանին, որ նաև մինչև Սահմանադրության փոփոխությունը, սահմանադրական իրավունքում և պրակտիկայում դա անվիճելի էր:

Ակնհայտ է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածի նպատակը Հանրապետության Նախագահի ինստիտուտի էության բացահայտումն է: Սակայն հոդվածի սահմանադրական բովանդակությունը պարզելը բավական բարդ է, քանի որ այն առավելապես որոշակի քաղաքական տեսության մարմնավորումն է Սահմանադրության մեջ⁸ և այդ պատճառով էլ իր էությամբ իրավաբանական առումով այնքան էլ միանշանակ չէ:

Հանրապետության Նախագահի իրավասությանը վերաբերող և 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների վերջնական տեքստում տեղ գտած դրույթները բավական երկար ճանապարհ են անցել: 2004 թվականին կառավարող կոալիցիայի կողմից Ազգային ժողովին ներկայացված սահմանադրական փոփոխությունների նախագիծն ընդհանուր առմամբ ընդլայնում էր Հանրապետության Նախագահի իշխանությունն ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ Կառավարության նկատմամբ⁹: Նախագահի լիազորությունների ընդլայնումը չէր վրիպել Վենետիկի հանձնաժողովի ուշադրությունից, որն իր՝ 2004թ. եզրակացությունում, մասնավորապես, նշել էր. «Պետության ժողովրդավարական կյանքի տեսանկյունից վտանգավոր է Հանրապետության Նախագահի լիազորությունների հետագա ընդլայնումը՝ առանց Ազգային ժողովի դերը մեծացնելու մասին դրույթների ամրագրման»¹⁰: Հանրաքվեի դրվող վերջնական տեքստում մի շարք հարցեր կարգավորվեցին, սակայն Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հստակություն չմտցրեց Հանրապետության Նախագահի կարգավիճակ-գործառույթներ-լիազորություններ հասկացությունների ծավալների բովանդակության և դրանց փոխհարաբերության մեջ: Սահմանադրական փոփոխությունները հստակություն չմտցրին նաև այն հարցում, թե ինչ իրավական նշանակություն ունի 49-րդ հոդվածը, և թե ինչ իրավական կապ կա 49-րդ հոդվածի և 55-րդ հոդվածում շարադրված՝ Հանրապետության Նախագահի լիազորությունների ցանկի միջև: 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 49-րդ հոդվածը կարող էր մեկնաբանվել իբրև Հանրապետության Նախագահի օգտին լրացուցիչ ընդհանուր իրավասության նորմ: Ակնհայտ է, որ Սահմանադրության այս անորոշությունը կարող էր օգտագործվել 55-րդ հոդվածում նշված՝ Հանրապետու-

թյան Նախագահի լիազորությունների շրջանակներից դուրս՝ նրա լիազորությունները, հետևաբար փաստացի իշխանությունն ավելի ընդլայնելու համար: Նման դեպքում հարցականի տակ կդրվեր իշխանությունների բաժանման սկզբունքը, քանի որ կխաթարվեր քաղաքական հավասարակշռությունը Հանրապետության Նախագահի և մյուս սահմանադրական մարմինների՝ Ազգային Ժողովի, Կառավարության և դատարանների միջև: Ծիշտ կլինե՞ր հստակ սահմանել, որ Նախագահի կարգավիճակի, գործառույթների սահմանումը բնավ էլ չի կարող հիմք հանդիսանալ Նախագահի համար՝ իրականացնելու այնպիսի լիազորությունները, որոնք Նախագահն անհրաժեշտ կհամարի իր գործառույթների արդյունավետ իրականացման համար¹²: Զանի որ Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված՝ Հանրապետության Նախագահի ֆունկցիաներին վերաբերող դրույթները կարող են նրա լիազորությունների անընդհատ ընդլայնման աղբյուր հանդիսանալ, անհրաժեշտ էր այս հոդվածում ավելացնել, որ Հանրապետության Նախագահն իր ֆունկցիաներն իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների միջոցով: Դրանով կհստակեցվեր, որ 49-րդ հոդվածը Հանրապետության Նախագահի պաշտոնի ընդհանուր ֆունկցիայի նկարագրությունն է և նրան իրավունք չի տալիս ձեռնարկել ցանկացած միջոցառում՝ 49-րդ հոդվածով իրեն տրված ֆունկցիաների իրականացման համար: Այս առումով շատ ցայտուն է Ռուսաստանի օրինակը (Ռուսաստանի Դաշնության սահմանադրության 80-րդ հոդվածի 1-2 մասերը սահմանում են նույնաբովանդակ դրույթներ)¹³, որտեղ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի՝ 1995 թվականի՝ Չեչնիային վերաբերող որոշման մեջ¹⁴ ՌԴ Սահմանադրության 80-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնաբանելիս Նախագահի գործառույթների ընդհանուր նկարագրությունը մեկնաբանվեց որպես բաց լիազորման նորմ: ՌԴ Սահմանադրական դատարանը ըստ էության դրանով ճանապարհ բացեց գերնախագահական կառավարման համակարգ ստեղծելու համար¹⁵:

Եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական պրակտիկան գնա Ռուսաստանի Դաշնության ճանապարհով, ապա պետք է ասել, որ նման դեպքերի համար տեղին կլինի ֆրանսիացի հայտնի իրավաբան Գ. Լավերնանի դիտարկումը, որ այդ դեպքում ավելի հեշտ է թվարկել այն լիազորությունները, որոնք Հանրապետության Նախագահը չունի¹⁶:

2005 թվականի սահմանադրական փոփոխու-

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունների արդյունքում պահպանվեց Սահմանադրության 56-րդ հոդվածի շարադրանքը. «Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին ու ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում»: Առանձին վերցրած՝ օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում այս հոդվածը Հանրապետության Նախագահին թույլ է տալիս առաջնային նորմատիվություն իրականացնել բոլոր ոլորտներում: Հանրապետության Նախագահի նման իրավասությունը, սակայն, համաձայնեցված չէր Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված փոփոխության հետ, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով¹⁷: Հետևաբար, ավելորդ էր Հանրապետության Նախագահի ակտերի՝ Սահմանադրությանը և օրենքներին չհակասելու մասին դրույթը, քանի որ բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը պետք է ընդունվեին Սահմանադրության և օրենքների հիման վրա և ի կատարումն դրանց: Սահմանադրության 56-րդ հոդվածը պետք է ընկալվեր և մեկնաբանվեր 49-րդ և 55-րդ հոդվածների հետ համատեղ, այսինքն՝ «ֆունկցիաների» և «լիազորությունների» սահմանազատմանը համապատասխան: Վեներտիկի հանձնաժողովը 2001թ. եզրակացությունում ((CDL-INF 2001)17, p. 46)¹⁸ ընդգծում էր, որ 49-րդ հոդվածի ընդհանուր դրույթը, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը պետք է ապահովի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, չի կարող հիմք ընդունվել Հանրապետության Նախագահի նորաստեղծ գործունեության համար: Սահմանադրության 56-րդ հոդվածի լայն մեկնաբանությունը և Հանրապետության Նախագահի կողմից իր իշխանության չարաշահումը կանխելու նպատակով 56-րդ հոդվածում անհրաժեշտ էր ամրագրել, որ Հանրապետության Նախագահը հրամանագրեր և կարգադրություններ է արձակում Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իր լիազորությունների իրականացման համար:

Դեռևս 2000թ. ապրիլին, երբ Վեներտիկի հանձնաժողովի հետ սկսվեցին սահմանադրական բարեփոխումների աշխատանքները, և՛ հանձնաժողովը, և՛ հայկական կողմն այն կարծիքին էին, որ Հանրապետության Նախագահն ունի նշանակման լայն լիազորություններ (հոդված 55, մասեր 5, 8, 10, 11), և այդ գործընթացում պետք է ընդգրկվել կառա-

վարությանն ու պառլամենտին (CDL 2000) 49, p. 3): Հանձնաժողովը նաև նշել էր, որ քաղաքացիական ծառայողներ նշանակելու՝ Հանրապետության Նախագահի լիազորությունը կարող է սահմանափակվել միայն վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյանների նշանակմամբ, սակայն նախագծի 55-րդ հոդվածի 5-րդ կետը քայլ է կատարում հակառակ ուղղությամբ. քաղաքացիական ծառայողների կատեգորիան փոխարինում է պետական ծառայողների շատ ավելի մեծ կատեգորիայով:

Որևէ տրամաբանական հիմնավորում չունեի մարզպետներին նշանակելու և ազատելու՝ 1995 թվականի Սահմանադրությամբ սահմանված գործող կարգի պահպանումը, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը վավերացնում է մարզպետների նշանակման և ազատման վերաբերյալ կառավարության որոշումները: Քանի որ մարզպետների հիմնական ֆունկցիան կառավարության տարածքային քաղաքականության իրականացումն է, իսկ Հանրապետության Նախագահը կառավարության մաս չի կազմում, և ըստ 2005 թվականի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ ներքին քաղաքականության հետ (որի մաս է կազմում տարածքային քաղաքականությունը) առնչություն չունի, ապա վավերացման պահանջը ոչ միայն հիմնավոր չէ, այլ ուղղակիորեն կարելի է դիտարկել որպես Նախագահի կողմից իրեն չվերապահված ոլորտ ներխուժման, որպես Նախագահի դիրքը ամրապնդող, սահմանադրական մարմինների շարքում այն ավելի ազդեցիկ դարձնող դրույթ:

Գործնականում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ Նախագահի ընտրություններից հետո վերջինիս ընդդիմադիր ուժը Ազգային ժողովում ձևավորի մեծամասնություն և կազմավորի կառավարություն: Կառավարություն կազմավորելուց հետո այդ ուժի հաջորդ տրամաբանական քայլն իր տարածքային քաղաքականությունը տեղերում կյանքի կոչող համախոհ մարզպետների նշանակումն է, որը, ինչպես նկատեցինք, առանց Հանրապետության Նախագահի համաձայնության չի կարող լինել: Արդյունքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ կառավարությունը ստիպված կլինի աշխատել Հանրապետության Նախագահին համախոհ և իրեն ընդդիմադիր մարզպետների հետ: Ուստի նման մոտեցումը թե՛ սահմանադրական իրավունքի, թե՛ արդյունավետ կառավարման համատեքստում ընդունելի ու հիմնավոր չէ: Եթե Հանրապետության Նախագահը չվավերացնի մարզպետների նշանակման կամ ազատման վերաբերյալ կառավարության որոշումը, ապա Հանրապե-

տության Նախագահի այս լիազորությունը կարող է հատկապես վտանգավոր լինել «համակեցության» պայմաններում, քանի որ նոր կառավարությունը հնարավորություն չի ունենա իրագործել իր տարածքային քաղաքականությունը:

Իշխանության թևերի միջև հավասարակշռության ապահովման համատեքստում կարևոր առաջընթաց էր Հանրապետության Նախագահի գլխավոր դատախազ և Երևանի քաղաքապետ նշանակելու լիազորության վերացումը: 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում էր գլխավոր դատախազին: Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում էր Հանրապետության Նախագահը¹⁹ . ընդ որում, Երևան քաղաքն ունի մարզի կարգավիճակ (108-րդ հոդված):

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության համաձայն՝ գլխավոր դատախազին նշանակելու լիազորությունը փոխանցվեց Ազգային ժողովին, Հանրապետության Նախագահը պահպանեց միայն Ազգային ժողովին գլխավոր դատախազի թեկնածու առաջադրելու լիազորությունը (հոդված 55, կետ 9)²⁰ :

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ Երևանը դադարեց մարզի կարգավիճակ ունենալ և ստացավ համայնքի կարգավիճակ: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել Երևանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն²¹ : Երևան քաղաքի ավագանու առաջին ընտրությունները անցկացվեցին 2009 թվականի մայիսի 31-ին²² :

Թեև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները հստակեցնում են Հանրապետության Նախագահի անձեռնմխելիության հարցը (հոդված 56.1)²³ , սակայն փոփոխությունների լուրջ բացթողումներից մեկն այն է, որ Հանրապետության Նախագահի իրավական պատասխանատվության հիմքերը սահմանափակվում են միայն պետական դավաճանությամբ կամ այլ ծանր հանցագործությամբ (հոդված 57)²⁴ : Քանի որ կիսանախագահական համակարգում Հանրապետության Նախագահը քաղաքական պատասխանատվություն չի կրում, արևելաեվրոպական գրեթե բոլոր սահմանադրությունները որպես Հանրապետության Նախագահի պաշտոնակության հիմք նախատեսում են նաև սահմանադրության խախտումը, որպեսզի

ինչ-որ չափով մեղմվի Հանրապետության Նախագահի քաղաքական մեծ իշխանության և նրա քաղաքական անպատասխանատվության միջև առկա անհամապատասխանությունը: Ուստի Հանրապետության Նախագահի կողմից սահմանադրության կոպիտ կամ դիտավորյալ խախտումը որպես պաշտոնանկության հիմք սահմանելը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Սահմանադրությամբ Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, կլինեք տրամաբանված ու հիմնավոր:

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հանրապետության Նախագահը պաշտպանության բնագավառում ձեռք բերեց մի շարք նոր լիազորություններ: Ըստ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների՝ Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է (հոդված 55 կետ 12), իսկ պատերազմի ժամանակ նա կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին (հոդված 55 կետ 13): Հանրապետության Նախագահը համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (հոդված 55 կետ 12): 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների 81-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության Նախագահը:

Թեև 2005 թվականի Սահմանադրության փոփոխությունները սահմանադրական ամրագրում են տալիս ազգային անվտանգության խորհրդին (հոդված 55-րդ կետ 6), սակայն այն մնում է միայն խորհրդատվական մարմին:

1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 111-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահն Ազգային ժողովի կողմից նախաձեռնված սահմանադրական փոփոխությունների նկատմամբ ունի 2/3 վետոյի իրավունք²⁵ : Չնայած Վենետիկի հանձնաժողովն իր 2004թ. դեկտեմբերի 6-ի եզրակացությունում քննադատության էր ենթարկել այդ դրույթը՝ համարելով չարդարացված, սակայն Հանրապետության Նախագահի այս լիազորությունը պահպանվեց:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել 2005 թվականի Սահմանադրական փոփոխությունների՝ Հանրապետության Նախագահի կարգավիճակին, գործառույթներին և լիազորություններին վերաբերող դրույթների վերլուծությունը, կարող ենք եզրա-

հանգել՝

- միմյանցից չտարանջատվեցին Հանրապետության Նախագահի ֆունկցիաները և լիազորությունները,

- Հանրապետության Նախագահի համար՝ որպես Սահմանադրության երաշխավորի, որևէ պատասխանատվություն չսահմանվեց Սահմանադրության կոպիտ կամ դիտավորյալ խախտման դեպքում,

- արտաքին քաղաքականության և պաշտպանության բնագավառներում չնախատեսվեց կրկնաստորագրման ինստիտուտը, ինչի հետևանքով այդ ոլորտներում կարող է վտանգվել միասնական քաղաքականության իրականացումը: Հանրապե-

տության Նախագահը պահպանեց իր իրավունքը առանց կրկնաստորագրման նշանակումներ կատարելու տարբեր պաշտոններում:

- Հանրապետության Նախագահը, ունենալով մարզպետներ նշանակելու և ազատելու մասին կառավարության որոշումները վավերացնելու լիազորություն, կարող է խոչընդոտել կառավարության կողմից միասնական ներքին քաղաքականության իրականացմանը:

¹ Տե՛ս Լ. Աբովյան, Իշխանության օրենսդիր և գործադիր թերի միջև լիազորությունների հավասարակշռումը ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ առաջարկող օրենքների նախագծերում, Սահմանադրական բարեփոխումները Հայաստանում /նյութերի ժողովածու/, Երևան 2005թ., էջ 142:

² Տե՛ս SDL-AD(2004) 044108, կետ 42. Ստրասբուրգ, 6-րդ դեկտեմբերի, 2004թ., կարծիք թիվ 313/2004:

³ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» ՀՀ օրենք, 1 օգոստոսի 1991թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր N 15 (995) 15 օգոստոսի 1991թ.:

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 23 ապրիլի 1994թ.:

⁵ Մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, «Կառավարման կիսանախագահական ձևի առանձնահատկությունները Հայաստանում», ԵԱՀԿ, Ընտրված նյութերի ժողովածու, էջեր 55-60:

⁶ Տե՛ս Օ. Լուխերիանոս, Հայեցակարգային նկատառումներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումների վերաբերյալ, Սահմանադրական բարեփոխումները Հայաստանում /նյութերի ժողովածու/, Երևան 2005թ., էջ 157:

⁷ Սահմանադրության փոփոխությունների կոպիցիոն ուժերի կողմից ներկայացված նախագծի սկզբնական տարբերակում նախատեսված էր, որ Հանրապետության Նախագահը նաև «պետության հաջորդայնության երաշխավորն է», սակայն այդ դրույթն առաջին ընթերցմամբ ընդունված (2005թ. մայիսի 11-ին) նախագծից հանվեց:

⁸ Ֆրանսիայի սահմանադրության 5-րդ հոդվածը գոլիզմի դոկտրինայի ամենացայտուն արտահայտությունն է սահմանադրությունում: Այդ հոդվածն ընդօրինակելու տեսանկյունից Հայաստանի Սահմանադրությունը միայնակ չէ: Ֆրանսիայի սահմանադրության 5-րդ հոդվածը պետության գլխի գործառույթների վերաբերյալ այս կամ այն ձևավորումներով ամրագրված է կառավարման տարբեր ձև (հիմնականում կիսանախագահական) ունեցող բազմաթիվ երկրների սահմանադրություններում: Տե՛ս, օրինակ, Ռումինիա (հոդված 80), Մոլդովա (հոդված 75), Լեհաստան (հոդված 126), Խորվաթիա (հոդված 94), Պորտուգալիա (հոդված 120), Իսպանիա (հոդված 56), Սլովակիա (հոդված 101), Ուկրաինա (հոդված 102), Ռուսաստան (հոդված 80) և այլն:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010, հոդված 49, էջ 562:

¹⁰ Տե՛ս Վ. Պողոսյան, Առաջին ընթերցմամբ ընդունված Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. Գիտորդ, հ. 12 (30) 2005 թ., էջ 8-11, Դեյվիդ Մ. Օլսոն, Հայաստանի Սահմանադրությունը և օրենսդիր-գործադիր փոխհարաբերությունները, Սահմանադրական բարեփոխումները Հայաստանում /նյութերի ժողովածու/, Երևան 2005թ. էջ 132:

¹¹ Տե՛ս CDL-AD (2004)044, կարծիք, թիվ 313/2004:

¹² Հեղինակների նման առաջարկը 2005թ. մերժվեց: «Ժողովրդավարություն» հասարակական կազմակերպության պատրաստած սահմանադրական փոփոխությունների նախագծի 111-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության նախագահը սույն հոդվածում սահմանված իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների միջոցով»: Տե՛ս Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, Վ. Գրիգորյան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ, Երևան 2005 թ., էջ 48:

¹³ Տե՛ս ՌԳ Սահմանադրություն՝ <http://www.constitution.ru/10003000/10003000-6.htm>:

¹⁴ Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 31 июля 1995 г. N 10-П "По делу о проверке конституционности Указа Президента Российской Федерации от 30 ноября 1994 года N 2137 "О мероприятиях по восстановлению конституционной законности и правопорядка на территории Чеченской Республики", Указа Президента Российской

Федерации от 9 декабря 1994 года N 2166 “О мерах по пресечению деятельности незаконных вооруженных формирований на территории Чеченской Республики и в зоне осетино-ингушского конфликта”,

<http://doc.ksrf.ru/decision/KSRFDecision30248.pdf>:

¹⁵ Տե՛ս Օ. Լուխերիանոթ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների 2001թ. աշնան տարբերակի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն, Սահմանադրական բարեփոխումները Հայաստանում /նյութերի ժողովածու/, Երևան 2005թ., էջ 210:

¹⁶ Տե՛ս Кругоголов М.А. Президент Французской Республики., М. 1980, С. 48.

¹⁷ ՀՀՊՏ 2005.12.05 /Հատուկ թողարկում/:

¹⁸ Տե՛ս <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF%282001%29017-e>:

¹⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Եր., Մխիթար Գոշ, 1997թ.:

²⁰ ՀՀՊՏ 2005.12.05 /Հատուկ թողարկում/:

²¹ ՀՀՊՏ 2005.12.05 /Հատուկ թողարկում/:

²² Տե՛ս <http://www.elections.am/yer2009/>:

²³ ՀՀՊՏ 2005.12.05 /Հատուկ թողարկում/:

²⁴ ՀՀՊՏ 2005.12.05 /Հատուկ թողարկում/:

²⁵ ՀՀ Սահմանադրություն, Եր., Մխիթար Գոշ, 1997թ.:

Грайр Товмасын

Руководитель - генеральный секретарь аппарата НС РА,
кандидат юридических наук, доцент,
докторант академии государственного управления РА

Вардан Погосян

Магистр политологии,
руководитель правовой программы НМОС в Армении

РЕЗЮМЕ

Конституционные изменения Республики Армения 2005 года по вопросам функций и полномочий президента Республики

Статья является анализом положений, касающихся статуса президента Республики, его функций и полномочий по изменениям Конституции Республики Армения 2005 года. В результате анализа выдвинуты проблемы по обсуждаемым вопросам, которые не нашли свои решения по данным изменениям.

Ключевые слова: статус президента, функции президента, полномочия президента, конституционные изменения, уравнивание власти, парламент, правительство.

Hrayr Tovmasyan

The RA NA Chief of Staff - Secretary General,
PHD in Law, Associate Professor,
Postdoctoral Researcher of the Public Administration Academy of RA

Vardan Poghosyan

Master’s in political science,
Head of the GIZ Legal Programme in Armenia

SUMMARY

The changes in functions and powers of the President of the Republic of Armenia after the Constitutional changes in 2005

The article discusses the changes in functions, powers and the role of the President after Constitutional reforms in 2005. As a result, problems not solved with the help of Constitutional changes were shown.

Keywords: The role of the President, Functions of the President, Powers of the President, Constitutional changes, The balance of power, Parliament, Government.